

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

«Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Այս լույս առավոտյան, երբ մեծ ավետիսովը Քրիստոսի սուրբ Ծննդյան երկնքի բարձունքներեն մեր հոգիներուն բոլոր առատապես կբաշխվի հրեշտակներուն երգը «խաղաղութեան և ի մարդիկ հաճութեան», Մենք առաջին սպասավորը մեր եկեղեցվո ու ժողովուրդի, բերկրյալ սրտով ողջույն և օրհնություն կբերենք Ձեզ, միաբանության և համայն Մեր հավատացյալ զավակներուն, այն մշտանորոգ անմար հույսով, թե մարդկային աշխարհը քաղցրությամբ պիտի ընդունի սուրբ Ծննդյան երկնային պատգամը ու պիտի դավանի զայն իբրև իր կյանքի ու ճակատագրի փրկության գերագույն հրամայականը:

Խաղաղությունն ու հաճությունը թող իջնեն նաև հայ եղբայրներու եկեղեցական ու ազգային կյանքեն ներս, հառավել պայծառացում մեր ժողովուրդի հոգևոր ու մշակութային առաքելության:

Վասնզի հայ ազգը իր նախնյաց հավատքով, իր մայր եկեղեցիով ու իր ոգեծին մշակույթով, լուսաբաշխ առաքելություն մը կհանդիսանա մարդկության ու պատմության հորիզոնին վրա:

Սուրբ Ծննդյան շնորհներով, ավելի խաղաղություն աշխարհին համայն, ավելի հաճություն ի մարդիկ բոլոր:

Նաև առավել լույս ու խաղաղություն մեր սուրբ եկեղեցիին, առավել սեր և միություն համայն ազգիս հայոց:

Քրիստոսակառույց սուրբ Էջմիածնեն և Մեր սրտեն Ձեզ սիրո ողջույն ամենաբարի մաղթանքներով հանդերձ:

«Շնորհք և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ. ամէն»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

* * *

Ամանորի և ս. Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, թեմական-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: